

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՆԱՍՏԱՍՅԱՆ ՍՈՒՔԻԱՍ ԱՆԱՍՏԱՍԻ

ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

*Ը.00.02«Տնտեսություն, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում»
մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության*

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Ս.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտում

Գիտական ղեկավար՝

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վլադիմիր Լիպարիտի Հարությունյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Խաչատուրի Մարկոսյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Գևորգ Տերդինանտի Կիրակոսյան

Առաջատար կազմակերպություն՝ Հայաստանի ազգային ագրարային համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թվականի նոյեմբերի 7-ին
ժ.13.30-ին, Երևանի պետական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի
տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդում:

Հասցե՝ 0009 ք. Երևան, Խ. Աբովյան 52:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական
համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. հոկտեմբերի 6-ին:

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար,

տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ա. Հ. Առաքելյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Տնտեսական բարեփոխումների ներկա փուլում Հայաստանում իրականացվող հարկային քաղաքականությունը թույլ չի տալիս ապահովել անհրաժեշտ ամբողջականություն և արդյունավետություն հանրապետության առջև ծառայած սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման գործում: Հարկային բեռի անհավասարաչափ բաշխման, դրա բարձր մակարդակի, հարկային եկամուտներում անուղղակի հարկերի մեծ տեսակարար կշռի, ստվերային տնտեսության գոյություն ունեցող ծավալների, ձևավորված տնտեսական միջավայրին բնորոշ ռիսկերի, հարկային վարչարարության արդյունավետության ցածր աստիճանի և նմանատիպ այլ հիմնախնդիրների առկայության պայմաններում հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացումը դառնում է **հրատապ և արդիական պահանջ**, ինչով էլ պայմանավորված են աշխատանքում այդ ուղղությամբ առկա հիմնախնդիրների ուսումնասիրությունը և դրանց լուծման ուղիների բացահայտման անհրաժեշտությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակը հարկային քաղաքականության բարելավմանն ուղղված մեխանիզմների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել հարկային քաղաքականության տեղը և դերը տնտեսության պետական կարգավորման համակարգում և բացահայտել դրա իրականացման առանձնահատկությունները,
- վերլուծել հարկային քաղաքականության մշակման միջազգային փորձը և կատարել տարբեր երկրներում տվյալ ուղղությամբ իրականացվող պետական կարգավորման համեմատական վերլուծություն,
- ուսումնասիրել հարկային համակարգի կառուցվածքը և գնահատել դրա ազդեցությունը հարկային քաղաքականության վրա,
- ուսումնասիրել հարկային քաղաքականության օրենսդրավական հիմքերը և դրանց ձևավորման առանձնահատկությունները ՀՀ-ում՝ բացահայտելով առկա թերությունները,
- հետազոտել հարկային քաղաքականության առանձնահատկություններն ու հիմնական դրսևորումները ՀՀ-ում,

- ուսումնասիրել հարկային բեռը, գնահատել դրա մակարդակը ՀՀ-ում և մշակել հարկային բեռի արդարացի բաշխմանն ուղղված առաջարկություններ,
- բացահայտել Հայաստանի Հանրապետությունում հարկային քաղաքականության իրականացման հիմնախնդիրները և մշակել դրանց լուծմանն ուղղված առաջարկություններ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը Հայաստանի Հանրապետության հարկային համակարգն է, իսկ առարկան՝ հարկային քաղաքականությունը և դրա իրականացման մեխանիզմները:

Հետազոտության տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը: Ատենախոսության համար հիմք են հանդիսացել այդ ոլորտը կարգավորող ՀՀ օրենքները, իրավական ակտերը, տնտեսագիտության տեսության դասական աշխատությունները, հայրենական և արտասահմանյան հեղինակների անցումային տնտեսության զարգացման առանձնահատկություններին նվիրված ուսումնասիրությունները, հարկային քաղաքականության մշակման և իրականացման տարբեր ասպեկտներին վերաբերող հայրենական և արտասահմանյան գրականությունը: Հետազոտության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության, ՀՀ ֆինանսների նախարարության և այլ պետական մարմինների պաշտոնական նյութերն ու տվյալները: Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսավիճակագրական, համակարգային, համեմատական և գործոնային վերլուծության մեթոդները:

Ատենախոսության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական արդյունքները, որոնք պայմանավորված են հետազոտությունում առաջադրված խնդիրների լուծմամբ, կայանում են հետևյալում.

- ՀՀ-ում հարկային քաղաքականության իրականացման առանձնահատկությունների և այդ ուղղությամբ կիրառվող մեխանիզմների վերլուծությամբ գնահատվել են հարկային դրույքաչափերի ազդեցության սահմանները տնտեսական զարգացման վրա և առաջարկվել են գործարար ակտիվության բարձրացման միջոցառումներ,
- տնտեսության իրական հատվածի զարգացման վրա հարկային քաղաքականության ազդեցության գնահատականի հիման վրա մշակվել են հարկերի խթանիչ դերի բարձրացմանը և տվյալ ոլորտի պետական կարգավորման կատարելագործմանն ուղղված առաջարկություններ,

- ներդրումների խթանման և ինովացիոն արդյունավետ քաղաքականության իրականացման նպատակով առաջարկվել է տեխնոլոգիական ծրագրերի իրագործմամբ զբաղված ընկերություններին ազատել շահութահարկից ամողջությամբ կամ մասնակիորեն՝ այդ ուղղությամբ կատարվող ֆինանսական հատկացումների մասով,
- հանրապետությունում հարկային վարչարարության գործող սկզբունքների ուսումնասիրության հիման վրա մշակվել են դրա արդյունավետության բարձրացման միջոցառումներ՝ ուղղված հարկման արդարացի մեխանիզմների ներդրմանը և հարկերի հավաքագրելիության մակարդակի բարձրացմանը:

Ատենախոսության գործնական նշանակությունը: ՀՀ հարկային քաղաքականության առանձնահատկությունների, հարկային համակարգում առկա հիմնախնդիրների բացահայտման, հանրապետությունում հարկային քաղաքականության պետական կարգավորման համակարգի վերաբերյալ աշխատանքում կատարված վերլուծությունները և հարկային քաղաքականության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունները կարող են օգտագործվել ՀՀ օրենսդիր և գործադիր մարմինների կողմից՝ հանրապետությունում հարկային քաղաքականության բարելավման, ինչպես նաև հարկային համակարգի կատարելագործման միջոցառումների համալիրի մշակման և իրականացման ուղղությամբ: Ստացված արդյունքները կարող են օգտակար լինել նաև նշված համակարգերում աշխատողների համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության հիմնական արդյունքները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում: Ատենախոսության հիմնական դրույթները հրատարակված են 4 հոդվածներում:

Ատենախոսության ծավալը և կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության տեքստը շարադրված է 155 էջի վրա՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության *ներածությունում* հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը, գիտական նորույթը և ստացված արդյունքների կիրառական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «Հարկային քաղաքականության տեղն ու դերը տնտեսության պետական կարգավորման համակարգում», գլխում բացահայտվել են հարկային քաղաքականության տեղն ու դերը տնտեսության պետական կարգավորման համակարգում, ուսումնասիրվել են հարկային քաղաքականության մշակման և իրականացման տեսամեթոդական հիմքերը, ինչպես նաև հարկային համակարգի կառուցվածքի ձևավորման առանձնահատկությունները:

Տնտեսության պետական կարգավորման համակարգում առանցքային դերակատարում ունի հարկային քաղաքականությունը, որը պետության կողմից հարկային համակարգի կարգավորման ոլորտում իրականացվող միջոցառումների համալիր է: Հարկային քաղաքականությունը հետապնդում է պետության և հասարակության տարբեր սոցիալական խմբերի ֆինանսական պահանջմունքների բավարարման, ինչպես նաև արդյունավետ տնտեսական զարգացման ապահովման և ֆինանսական ռեսուրսների ռացիոնալ վերաբաշխման նպատակ: Հարկային քաղաքականության ուղղությունների ճիշտ ընտրությունը, որպես կանոն, դառնում է ընդհանուր տնտեսական քաղաքականության արդյունավետության ապահովման կարևորագույն նախապայման: Միևնույն ժամանակ, այդ ուղղությունների ընտրությունը կապված է բազմաթիվ, այդ թվում այնպիսի գործոնների հետ, ինչպիսիք են երկրի տնտեսության վիճակը, ներդրումային մթնոլորտը, ռեսուրսային ապահովվածության աստիճանը, աշխարհաքաղաքական դիրքը և այլն:

Հարկային քաղաքականությունը խարսխված է հարկերին բնորոշ գործառույթների վրա, որոնց միջոցով իրականացվում են այդ քաղաքականության նպատակների իրագործումը և առկա խնդիրների լուծումը: Հարկերն իրենց հիմնական՝ ֆիսկալ և կարգավորիչ գործառույթներից բացի ունեն նաև սոցիալական ու վերահսկողական ֆունկցիա:

Հարկային քաղաքականության արդյունավետության մասին վկայող կարևոր ցուցանիշ է հանդիսանում հարկային բեռ, որը կարելի է դասակարգել


մակրոմակարդակով՝ (համապետական և տարածաշրջանային մակարդակներ) և միկրոմակարդակով (ձեռնարկության և ֆիզիկական անձանց մակարդակ): Հարկային բեռի ցուցանիշն հնարավորություն է տալիս իրականացնել տարբեր երկրներում հարկային բեռի մակարդակների համեմատություն, գնահատել դրա ներգործությունը ձեռնարկատիրական միջավայրի վրա և տնտեսական քաղաքականության մշակման առումով կայացնել մի շարք որոշումներ:

Գոյություն ունի սերտ կապ հարկային համակարգի և հարկային քաղաքականության միջև: Ըստ էության, հարկային քաղաքականության ազդեցությամբ է ձևավորվում երկրի հարկային համակարգը, ինչը ենթադրում է վերջինիս տեսամեթոդական հիմքերի համակողմանի ուսումնասիրություն: Այս տեսանկյունից, հարկերը, հարկային համակարգը և քաղաքականությունը գտնվում են սերտ փոխկախվածության մեջ: Միաժամանակ, հարկային համակարգի ձևավորման և գործունեության վրա էական ազդեցություն ունեն սվյալ երկրի սոցիալ տնտեսական առանձնահատկությունները, վերջինիս բնորոշ հիմնախնդիրները և պետության տնտեսական քաղաքականության գերակայությունները, որոնց համալիր ազդեցության ներքո էլ պետք է ձևավորվի երկրի հարկային համակարգը և մշակվի ու իրականացվի համապատասխան հարկային քաղաքականություն: Միայն այդ դեպքում կարելի է ակնկալել ընդհանուր տնտեսական քաղաքականության արդյունավետություն:

Ատենախոսության երկրորդ՝ «Հարկային քաղաքականության հիմնական ուղղությունները և առանձնահատկությունները ՀՀ-ում», գլուխը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հարկային քաղաքականության օրենսդրաիրավական հիմքերի և վերջիններիս ձևավորման առանձնահատկությունների ուսումնասիրությանը, հարկային քաղաքականության կատարելագործման մոտեցումների, դրանց դրսևորման, հարկային քաղաքականության միջազգային փորձի, ինչպես նաև ՀՀ հարկային քաղաքականության հետ այդ փորձի համեմատական վերլուծությանը:

Ընդհանուր տնտեսական քաղաքականության կարևորագույն բաղադրիչն, անշուշտ, հարկային քաղաքականությունն է: Դրա ձևավորումն ու զարգացումն, ըստ էության, հետապնդում է երկրում մակրոտնտեսական հավասարակշռության ապահովման և նրատնտեսական համակարգի արդյունավետության բարձրացման նպատակ: Հայաստանի տնտեսական զարգացման ցուցանիշների դինամիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ անցած ժամանակահատվածում հանրապետությունում իրականացված

հարկային քաղաքականությունը չի հանգեցրել մակրոտնտեսական ցուցանիշների բարելավման և տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացման: Ընդ որում, տնտեսության համար ցուցանիշների ոչ նպաստավոր մակարդակներ են արձանագրվել մինչև անգամ այն պայմաններում, երբ երկրում գրանցվել են հարկերի հավաքագրման աճի կայուն միտումներ (տես գծապատկեր 1): Հետևաբար, պետք է եզրակացնել, որ հարկերի հավաքագրման գործընթացի բարելավումը դեռևս չի նշանակում արդյունավետության մակարդակի բարձրացում: Այդ տեսանկյունից, Հայաստանում առավել կարևոր է դառնում հարկային բեռի գործոնը, որի հավասարաչափ ու արդարացի բաշխումը, մեր կարծիքով, կհանդիսանա կարևոր նախապայման տնտեսության ընդհանուր արդյունավետության բարձրացման համար:



Գծապատկեր 1-Հարկային եկամուտների դինամիկան՝ 2003-2013թթ.¹

Հայաստանի Հանրապետությունում հարկային բեռի բաշխվածության դինամիկայի ուսումնասիրության և հարկային եկամուտներում հարկատեսակների կառուցվածքի վերլուծության հիման վրա առաջարկվել է հարկային բեռն անուղղակի հարկման դաշտից տեղափոխել ուղղակի հարկման և գործարարության դաշտ, կարևորելով շահութահարկի, որպես տնտեսական գործունեության ակտիվության վրա ազդող կարևորագույն գործիքի դերը: Աշխատանքում իրականացված հաշվարկների արդյունքում հիմնավորվել է հանրապետությունում շահութահարկի տարբերակված դրույքաչափերի կիրառման անհրաժեշտությունը: Այդպիսի եզրահանգման համար հիմք են հանդիսացել այդ հարկատեսակի նկատմամբ հայրենական

¹ <http://www.taxservice.am/Content.aspx?itn=TITaxStatData>

տնտեսավարող սուբյեկտների ունեցած վերաբերմունքի և դրա դրսևորումների վերլուծության արդյունքները: Մասնավորապես, հանրապետության ընդհանուր հարկային եկամուտներում անցած ժամանակահատվածում շահութահարկով պայմանավորված մուտքերը չեն դրսևորել աճի կայուն միտումներ: Շահութահարկի գանձման առումով վարչարարության ուժեղացման պայմաններում հարկային եկամուտներում դրանով պայմանավորված մուտքերի ծավալը սկսել է աճել, սակայն «Շրջանառության հարկի մասին» ՀՀ օրենքի ներդրմամբ այն կրկին նվազել է:

Ընդհանուր առմամբ, 2007-2013թթ շահութահարկի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում չի գերազանցել 2.9 տոկոսը, որը խոսում է դրա գծով հարկային հաշվառման բազմաթիվ թերությունների և բացթողումների, ինչպես նաև շահութահարկ վճարողների համար վերջինիս բեռը բարձր լինելու մասին: Հետևաբար, շահութահարկի հարկվող եկամուտը կամ թերհայտարարագրվում է կամ իրականացվում է անօրինական և չհաշվառված տնտեսական գործունեություն:

Հայաստանում շահութահարկի կիրառման և հաշվառման քաղաքականության բարելավման նպատակով ատենախոսությունում մշակված մոտեցումը թույլ է տալիս միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում ապահովել շահութահարկով պայմանավորված մուտքերի աճ հարկային եկամուտներում: Ընդ որում, առաջարկվող մոտեցումն ոչ միայն հանգեցնում է ՀՆԱ-ի աճի, այլ նաև նպաստում է ստվերային տնտեսության ծավալների աստիճանական կրճատմանը: Այս դեպքում, որպես շահութահարկի արդյունավետությունը բնորոշող բանաձևեր են առաջարկվում.

$$\tau_u = \tau_q / (\tau_n \cdot \text{ՀՆԱ}) 100 \quad (1)$$

$$\tau_u = \tau_q / (\tau_n \cdot \text{Հե}) 100 \quad (2)$$

որտեղ՝

τ_u - շահութահարկի արդյունավետությունն է,

τ_q - շահութահարկի գումարն է,

τ_n – շահութահարկի դրույքաչափն է,

ՀՆԱ – համախառն ներքին արդյունքն,

Հե- հարկային եկամուտներն են:

Առաջարկված մոտեցման հիմքում դրված է այն գաղափարը, որ Հայաստանում անուղղակի հարկերի արդյունավետության բարձրացման համար տարբեր տնտեսավարող սուբյեկտների նկատմամբ անհրաժեշտ է կիրառել տարբերակված մակարդակներ՝ սահմանելով համապատասխան

դրույքաչափեր: Մասնավորապես, որպես օրինակ, կարելի է դիտարկել հետևյալ երկու դեպքերը.


1. 9մլն-ից մինչև 58.35 մլն դրամ տարեկան շրջանառության միջակայքում գտնվող տնտեսվարող սուբյեկտների համար՝ 10 տոկոս
2. 58.35 մլն դրամի գերազանցման դեպքում՝ 20 տոկոս

Կիրառելով (1)-ը և (2)-ը այս դեպքերի համար կստացվի.

$$\tau_u = \tau_q / (0.2 \cdot \text{ՀՆԱ}) 100, \quad \tau_u = \tau_q / (0.1 \cdot \text{ՀՆԱ}) 100 \quad (3)$$

$$\tau_u = \tau_q / (0.2 \cdot \text{Հե}) 100, \quad \tau_u = \tau_q / (0.1 \cdot \text{Հե}) 100 \quad (4)$$

2007-2013թթ. շահութահարկի բեռը ՀՆԱ-ում 20 տոկոսի դեպքում կազմում է միջինը 0.5 տոկոս, իսկ 10 տոկոսի դեպքում՝ 0.3 տոկոս: Կարճաժամկետ հատվածում շահութահարկի բեռը ՀՆԱ-ում 10 տոկոս դրույքաչափի դեպքում տալիս է ավանդական դրույքաչափի՝ 20 տոկոսի նկատմամբ շուրջ 0.2-0.3 տոկոսային կետով շեղում (Գծապատկեր 2): Սակայն, հաշվի առնելով, որ հարկի դրույքաչափի նվազեցման դեպքում մինչև 58.35 մլն դրամ տարեկան շրջանառություն ունեցող կազմակերպությունները կարող են ավելանալ, ապա 10 տոկոս դրույքաչափի դեպքում միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում ՀՆԱ-ի կառուցվածքում շահութահարկի մասնաբաժինը կփոխվի՝ դեպի աճ, և հարկային բեռը կընկնի առավելապես գործարար, այլ ոչ թե՝ սոցիալական հատվածի վրա:




Գծապատկեր 2-Շահութահարկի արդյունավետությունը ՀՆԱ-ի կառուցվածքում 20% և 10 % դեպքերում ²

Նույն տրամաբանությունը գործում է նաև հարկային եկամուտներում շահութահարկի տեսակարար կշռի փոփոխության ժամանակ: Օրինակ,

² Հաշվարկվել է հեղինակի կողմից:

կարճաժամկետ հատվածում շահութահարկի մուտքերը հարկային եկամուտներում 10 տոկոս դրույքաչափի դեպքում 2 անգամ կրճատվում են: Եթե 2007-2013թթ 20 տոկոս դրույքաչափի դեպքում շահութահարկի բեռը հարկային եկամուտներում միջինը կազմում է 3 տոկոս, ապա նույն ժամանակաշրջանում 10 տոկոսի դեպքում շահութահարկի բեռը կազմում է 1.5 տոկոս (Գծապատկեր 3): Այս դեպքում, միջնաժամկետ և երկարաժամկետ հատվածներում մինչև 58.35 մլն. դրամ տարեկան շրջանառություն ունեց տնտեսավարողները, մեր կարծիքով, աստիճանաբար կգան դեպի շահութահարկի հաշվառման դաշտ, քանի որ վերջինիս բեռը 50 տոկոսով կնվազի՝ հետագայում պետական բյուջեում ապահովելով ներկայիս մակարդակից 50 տոկոսով ավել մուտքեր:



Գծապատկեր 3 Շահութահարկի արդյունավետությունը հարկային եկամուտների կառուցվածքում 20 % և 10% դեպքերում ³

Վերլուծելով ՀՀ-ում վարվող հարկային քաղաքականությունը և այն համադրելով տվյալ ոլորտի գործունեությունը բնորոշող միջազգային չափորոշիչների հետ, եզրահանգել ենք, որ, որ ներկայիս ՀՀ հարկային քաղաքականությունն ունի ֆիսկալ բնույթ, որի դեպքում հարկային եկամուտների կառուցվածքում գերիշխում են անուղղակի հարկերը՝ ԱԱՀ-ն ու ակցիզային հարկը, դրանց վճարողներն են հանդիսանում սոցիալապես անապահով խավը: Նման իրավիճակը պայմանավորված է այն հանգամանքով, որ հանրապետությունում ներկայումս զգացվում է կենտրոնացված ֆինանսական ռեսուրսների խիստ պակաս, ինչը պահանջում է ամեն գնով պետական բյուջեի հարկային մուտքերի ավելացում: Մինչև նույն ժամանակ, պետական կառավարման և աշխատանքների կազմակերպման առումով առկա

³ Հաշվարկվել է հեղինակի կողմից:

են լուրջ ռեզերվներ՝ հանրապետությունում հարկային քաղաքականությունն արդյունավետ հիմքերի վրա դնելու համար:

Ատենախոսության երրորդ՝ «Հարկային քաղաքականության կատարելագործման ուղիները ՀՀ-ում», գլխում վերհանվել են ՀՀ հարկային քաղաքականության բարելավման և հարկային քաղաքականության արդյունավետությանը խոչընդոտող հիմնախնդիրները, առաջարկվել են դրանց լուծման հիմնական մոտեցումներ և լուծումներ:

Հարկային քաղաքականության կատարելագործմանն ուղղված բարեփոխումները, ելնելով ներկայիս տնտեսական հարաբերությունների զարգացման առանձնահատկություններից, իրականացվում են երեք հիմնական ուղղություններով՝ օրենսդրական, տնտեսական և վարչարարական:

Օրենսդրական դաշտում բարեփոխումները հարկային քաղաքականության ուղղությամբ, ընդհանուր առմամբ, պետք է միտված լինեն այնպիսի խնդիրների լուծմանը, ինչպիսիք են.

- հարկային օրենսդրության հստակեցումը և պարզեցումը,
- հարկային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ արդյունավետ հսկողության մեխանիզմների ներդրումը,
- հարկման ռեժիմների արագ և չհիմնավորված փոփոխությունների բացառումը,
- հարկային իրավախախտումների համար սահմանված պատասխանատվության միջոցների մեղմացումը,
- հարկային արտոնությունների վերանայումը և բացառապես ռազմավարական նշանակություն ունեցող տնտեսավարող սուբյեկտներին դրանց տրամադրումը,
- եկամտային հարկի գծով չհարկվող շեմի հիմնավորված մակարդակի սահմանումը և այլն:

Հարկային քաղաքականության կատարելագործմանն ուղղված նշված խնդիրների լուծումը, վերջին հաշվով, կնպաստի ՀՀ տնտեսության զարգացմանը և հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացմանը: Դրա համար, առաջին հերթին, պետք է էականորեն մեծացնել հարկերի խթանիչ դերը, հատկապես կազմակերպություններից շահութահարկի գանձման դեպքում անհրաժեշտ է չհարկել շահույթի այն մասը, որն ապահովվել է ինքնարժեքի նվազեցման հաշվին: Սա, մի կողմից, կխթանի տնտեսավարող սուբյեկտների կողմից իրականացվող ներդրումները, իսկ մյուս կողմից, այլ հավասար պայմաններում, կնվազեցնի ապրանքների գները:

Փոքր և միջին ձեռնարկատիրությունը յուրաքանչյուր տնտեսության կայուն զարգացման հիմքն է: Ձեռնարկատիրության այդ տեսակով է հիմնականում պայմանավորված զբաղվածության ապահովման և կենսագործունեության համար անհարաժեշտ եկամուտների ձևավորման հետ կապված խնդիրների լուծումը: Վերջապես, փոքր և միջին ձեռներեցության միջոցով է ձևավորվում յուրաքանչյուր երկրի միջին խավը, որն էլ հանդիսանում է սոցիալ-տնտեսական կայուն զարգացման գրավական: Հայաստանում այսօր փոքր ու միջին ձեռնարկատիրությունն որոշակի վերապահումներով հիմնականում զարգացած է մանրածախ առևտրի ոլորտում: ՀՀ տնտեսության դիվերսիֆիկացիայի ցածր մակարդակի պայմաններում դժվար է ակնկալել լուրջ որակական տեղաշարժեր միայն առևտրի ոլորտի զարգացման հաշվին: Այդ իսկ պատճառով, հրամայական պահանջ է դառնում հարկային արտոնությունների տրամադրումը և բարենպաստ պայմանների ստեղծումը այն ՓՄՁ-երի համար, որոնք գործում են տնտեսության իրական հատվածում՝ արդյունաբերությունում և գյուղատնտեսությունում, ինչպես նաև ներգրավված են գիտահետազոտական և փորձարարական աշխատանքներում: Այս քայլով, կառավարությունը կստեղծի անհրաժեշտ հիմքեր տնտեսության կայուն զարգացման, դրա դիվերսիֆիկացման, գործազրկության կրճատման, և որ ամենակարևորն է, հարկային եկամուտների կայուն աճի ապահովման համար:

Հանրապետությունում ներկայումս գործող հարկային համակարգը որոշակի խոչընդոտներ է ստեղծում ձեռնարկատիրական նախաձեռնությունների համար: Այդ առումով, հատկապես ինովացիոն ոլորտներում վենչուրային կապիտալով բիզնես ծրագրերի իրականացման ժամանակ անհրաժեշտ է առնվազն առաջին տարիների ընթացքում տվյալ ոլորտում հիմնական գործունեություն ծավալող հարկ վճարողներին ազատել հարկային պարտավորություններից: Այդպիսի մոտեցումն անշուշտ, կխթանի գործարար ակտիվությունը և էականորեն կնպաստի տնտեսության արդիականացմանը:

Տնտեսական ճգնաժամը, որպես կանոն, հանգեցնում է համախառն պահանջարկի կրճատման, որը ենթադրում է հարկային բեռի նվազեցում՝ նպաստելով սպառման և ներդրումների աճին: Հայաստանում դա տեղի չունեցավ, հակառակը, հարկային որևէ դրույքաչափ չփոփոխվեց, ավելին, նախկինում գործող եկամտահարկի և սոցիալական վճարի փոխարեն 2013 թվականից սկսվեց կիրառվել եկամտային հարկը, որով պայմանավորված

հարկային բեռը զգալիորեն գերազանցեց նախկինում եղած նույն ցուցանիշը: Մա ևս վկայում է, որ ՀՀ-ում բացառապես գերակայում է հարկերի ֆիսկալ գործառույթը: Մակայն, հարկային բեռի ընդհանուր մակարդակի կրճատման նպատակով անհրաժեշտ է, նախ և առաջ, ապահովել ֆիզիկական անձանց եկամուտների վրա հարկային ճնշման թուլացում և հարկերի կարգավորիչ գործառույթի ընդլայնում հատկապես՝ սոցիալական ոլորտում: Ավելին, բնակչության սոցիալապես անապահով խավի համար անհրաժեշտ է ընդլայնել հարկային արտոնությունները: Ցածր եկամուտ ստացող և սոցիալական անապահով խմբերում գտնվող քաղաքացիներին հարկերի վճարումից ազատումը հնարավորություն կտա համահարթեցնել բնակչության եկամուտների մակարդակը և թուլացնել սոցիալական լարվածությունը:

Համախառն պահանջարկի խթանման և բնակչության կենսամակարդակի բարձրացման համար պետք է նվազեցնել ֆիզիկական անձանց աշխատավարձի ֆոնդի վրա հարկային բեռի մակարդակը: Դրա համար անհրաժեշտ է նվազագույն աշխատավարձի չափով չհարկվող շեմի և մինչև 200.000 դրամ եկամտի դեպքում ոչ ավել քան 10 տոկոս եկամտային հարկի դրույքաչափի սահմանում: Սրանով պայմանավորված հարկային մուտքերի նվազումը կարող է արագորեն փոխհատուցվել չհիմնավորված և ոչ արդյունավետ պետական ծախսերի կրճատմամբ:

Տնտեսության իրական հատվածի զարգացմանը նպաստելու և ներդրումային միջավայրը բարելավվելու համար նպատակահարմար է տվյալ ոլորտի ձեռնարկությունների նկատմամբ ցուցաբերել տարբերակված մոտեցում: Մասնավորապես, որոշ ձեռնարկությունների համար կարելի է սահմանել դրա 10, իսկ ռազմավարական նշանակության օբյեկտների դեպքում՝ նաև 0 տոկոս դրույքաչափ: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ուժեղացնել հարկային հսկողությունը և իրականացնել համապատասխան ուսումնասիրություններ: Հարկ է նաև նշել, որ հայրենական տնտեսության արդիականացման և վերազինման համար անհրաժեշտ է վերանայել «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված ամորտիզացիոն քաղաքականության սկզբունքները՝ օրենսդրությամբ սահմանված նվազագույն ժամկետները կրճատելու և արագացված ամորտիզացիա իրականացնելու ուղղությամբ:

Հայաստանի Հանրապետությունում հարկային քաղաքականության արդյունավետության վրա մեծապես ազդում է տրամադրված արտոնությունների հիմնավորված լինելու հանգամանքը: Դրանք, մեր

կարծիքով, ունեն հրատապ վերանայման անհրաժեշտություն, քանի որ որևէ ձևով չեն նպաստում տնտեսության զարգացմանը: Արտոնությունները պետք է տրամադրվեն բացառապես ռազմավարական կարևորություն ունեցող արտադրությունների արդիականացման կամ հետագա զարգացման համար որոշիչ նշանակություն ունեցող ճգնաժամային երևույթների հետևանքների վերացման նպատակներով:

Տարածքային համաչափ զարգացման համար անհրաժեշտ է հանրապետության սահմանամերձ մարզերում կիրառել հարկային տարբերակված դրույքաչափեր: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրապետության հիմնական տնտեսական ներուժը կենտրոնացված է Երևանում և մարզերից կա մարդկանց մեծ արտահոսք դեպի մայրաքաղաք՝ հարկերի արտոնյալ դրույքաչափերի սահմանմամբ, սահմանամերձ մարզերում և Ադետի գոտում ձեռներեցության զարգացման և աշխատատեղերի ստեղծման համար, մեր կարծիքով, կստեղծվեն բավականաչափ նպաստավոր պայմաններ:

Հայաստանում հարկային քաղաքականության արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է հաստատագրված վճարով հարկվող գործունեության որոշ տեսակները տեղափոխել դեպի հարկման ընդհանուր դաշտ: Հաստատագրված վճարով հարկվող ոլորտներն անհրաժեշտից շատ են, ինչը խեղաթյուրում է հարկման արդարացիության սկզբունքը և մեր կարծիքով բացասաբար է անդրադառնում երկրում հարկային քաղաքականության արդյունավետության վրա:

Հայաստանում հարկային համակարգի արդյունավետ կազմակերպման միջոցով կարելի է ականորեն բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը: Դրա համար որպես ելակետ, կարելի դիտարկել սպառման կամ աշխատավարձի ֆոնդի և աշխատանքի արտադրողականության հարաբերակցությունը: Վերջինս, բնորոշելով արտադրական ձեռնարկության աշխատանքի արդյունավետությունը՝ որոշվում է այնպիսի գործոններով, ինչպիսիք են աշխատողների որակավորման աստիճանը, արտադրության միջոցների վիճակը, աշխատանքի կազմակերպվածության աստիճանը, արտադրության ինովացիոն բնույթը, կառավարման մակարդակը և այլն:

Արտադրություն ներդրումների ներգրավումը խթանելու համար անհրաժեշտ է շահութահարկից մասնակի կամ ամբողջությամբ ազատել ընկերության շահույթի այն մասը, որը կներդրվի ինովացիոն տնտեսական ծրագրերում: Դա մեծապես կխթանի ժամանակակից և հեռանկարային

զարգացման ներդրումային ծրագրերի իրագործումը՝ հետագայում ստեղծելով հարկման ավելի մեծ բազա:

Տնտեսության կարգավորման արդյունավետության ցածր մակարդակն արդյունք է նաև հարկային վարչարարության ոլորտում առկա խնդիրներով, որոնց կարգավորման ուղղությամբ աշխատանքում առաջարկվել են հետևյալ մոտեցումները.

- հարկային հաշվետվությունների քանակի և պարբերականության կրճատում,
- հաշվետվությունների մեջ արտացոլվող տեղեկատվության պարզեցում,
- ՓՄՁ-երի համար հարկային հաշվետվողականության առավել պարզեցված կարգի սահմանում,
- հարկային ծառայության աշխատակիցների վարձատրության չափի վերանայում, նյութական խրախուսման արդյունավետ համակարգի ներդրում:

Հայաստանի Հանրապետությունում տնտեսության արդյունավետության ցածր մակարդակը պայմանավորված է նախ նրանով, որ դեռևս ՀՆԱ–ում շատ փոքր է հարկային մուտքերի տեսակարար կշիռը: Դա, անշուշտ, ոչ միայն հետևանք է ստեղծված ավելացված արժեքի փոքր ծավալի, այլ նաև կախված է ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հարկերից խուսափելու տարածված պրակտիկայից, փողերի լվացումից, սովերային շրջանառությունից և տնտեսությունում գոյություն ունեցող բացասական այլ երևույթներից: Դրա դեմ պայքարի արդյունավետ միջոց կարող է դառնալ հարկատուների ծախսերի և և եկամուտների համապատասխանության վերահսկումը: Այդ առումով, հարկային մարմինն անհարժեշտ է օժտել բավարար լիազորություններով՝ կատարված ծախսերի հիման վրա հարկատուների եկամուտներն անուղղակի եղանակով գնահատելու համար: Միջազգային փորձը ցույց է տալիս, որ փողերի լվացման և հարկերից խուսափելու դեմ պայքարում հարկային մարմիններն ունեն լայն իրավասություններ, պայմանավորված այն հանգամանքով, որ զարգացած երկրներում օրենսդրորեն է ամրագրված տարբեր կառույցների և կազմակերպությունների, մասնավորապես, առևտրային բանկերի, նոտարների, անշարժ գույքի գործակալների, աճուրդների և սակարկությունների կազմակերպիչների, դիլերների և տնտեսական շրջանառության այլ մասնակիցների պարտավորությունը՝ պետությանն անձի կողմից

իրականացված տնտեսական գործարքների և կատարված ծախսերի մասին անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման մասին:

Հարկային քաղաքականության արդյունավետության բարձրացման կարևոր ուղղություններից մեկը պետք է դառնա տեղեկատվության ապահովման և խորհրդատվության տրամադրման մեխանիզմների կատարելագործումը: Մասնավորապես, անհրաժեշտ է առաջին հերթին, ստեղծել ընդունելության և խորհրդատվության մասնագիտացված կենտրոններ, հեռախոսային և համացանցային տեղեկատուներ, հրատարակել հարկային օրենսդրության դրույթների պարզաբանմանը և լուսաբանմանը նվիրված գրքույկներ, տեղեկատուներ և հարկատուների համար անհրաժեշտ այլ նյութեր:

Հարկային վարչարարության գործընթացին բնորոշ հարաբերությունների կարգավորման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է մշակել հարկային վարչարարության «առողջացման» ռազմավարություն, որով կսահմանվեն հարկային քաղաքականության գերակա նպատակները և դրանց իրագործումն ապահովող համալիր միջոցառումները: Ակնհայտ է, որ հարկային վարչարարությունն ուղղակիորեն կապված է հարկային հսկողության հետ, որի իրականացման հիմնական ձևը հարկային ստուգումներն են: Վերջիններս ունենալով կարևոր դերակատարում հարկային համակարգում, երբեմն, ոչ միայն չեն նպաստում ոլորտի արդյունավետության բարձրացմանն, այլև բացասաբար են անդրադառնում տնտեսվարողների բարոյահոգեբանական վիճակի և գործարար մթնոլորտի վրա: Հատկապես, ՓՄՁ-երի զարգացման տեսանկյունից հարկային ստուգումներ պետք է անցկացնել բացառապես հարկերից խուսափելու դեպքերի բացահայտման, ինչպես նաև անօրինական գործունեություն իրականացնելու վերաբերյալ օպերատիվ-հետախուզական տեղեկատվություն ստանալու ժամանակ: ՀՀ պետական բյուջեի մուտքերի զգալի մասն ապահովվում են խոշոր հարկատուների հաշվին և բնականաբար այստեղ անհրաժեշտ է ցուցաբերել առնանձնահատուկ մոտեցում, քանի որ այդ հարկատուների հարկային պարտավորությունների ժամանակին և ամբողջական կատարման աստիճանով է պայմանավորված պետական բյուջեի եկամտային մասի ապահովումը: Այս ոլորտում անհրաժեշտ է բարձրացնել հսկողական աշխատանքների արդյունավետությունը, մասնավորապես, կիրառելով ամենօրյա հեռակա (on-line) հսկողություն:

Հարկային հսկողության ոլորտում բարեփոխումների հիմնական

ուղղություններ պետք է դառնան.

- հարկային չհիմնավորված ստուգումների բացառումը և արտագնա ստուգումների քանակի կրճատումը,
- ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրումը,
- հարկային և պետական տեղեկատվական բազայի միավորումը,
- հարկատուների տնտեսական վիճակի մշտադիտարկումը,
- հարկային օրենսդրության խախտումների բացահայտման հստակ ընթացակարգերի կիրառումը,
- հարկերից խուսափող սուբյեկտների և հարկային ստուգումների արդյունքների մասին հասարակական իրազեկման պրակտիկայի ներդրումը:

Հարկային համակարգի ցածր արդյունավետության պատճառներից մեկը ոլորտում գոյություն ունեցող հովանավորչության դրսևորումներն են, ինչպես նաև պետական պաշտոնյաների և ծառայողների ուղղակի կամ անուղղակի ընդգրկվածությունը ձեռնարկատիրական գործունեության մեջ: Այս հանգամանքը, բնականաբար, առաջացնում է որոշակի դժվարություններ հարկահավաքման գործընթացում և չի նպաստում համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանը: Թեև այս ուղղությամբ օրենսդրության շարունակական բարելավումը հանգեցնում է որոշակի դրական փոփոխությունների, սակայն, մեր կարծիքով, հարցի արմատական լուծումը պահանջում է այդ ուղղությամբ հետևողական քայլերի իրականացում և խիստ պատասխանատվության միջոցների սահմանում: Մասնավորապես, անհրաժեշտ է սահմանել հարկման հրապարակայնության և թափանցիկության ապահովման հստակ սկզբունքներ, ինչպես նաև բարձրացնել հասարակության ակտիվությունը դրանց վերահսկողության նկատմամբ: Հարկային մարմնի կողմից անպարտաճանաչ հարկատուների ի ցույց դնելը և դրանց անունների պարբերաբար հրապարակումը կնպաստեն հասարակության ավելի լայն զանգվածների իրազեկմանը և հարկերից խուսափող կազմակերպությունների թվաքանակի կրճատմանը: Այլ խոսքով, նշված խնդիրների լուծումը պահանջում է հասարակական վերահսկողության դերի մեծացում, պաշտոնյաների կողմից գործարարությամբ զբաղվելու դեպքերում հասցեական խիստ պատասխանատվության կիրառում, անպարտաճանաչ հարկատուների և նրանց հովանավորող պաշտոնյաների նկատմամբ համարժեք պատժամիջոցների սահմանում:

Եզրակացություններ բաժնում ամփոփված են հետազոտության

հիմնական եզրահանգումները.

1. Հայաստանի Հանրապետությունում հարկային քաղաքականության կատարելագործումը պայմանավորված է մի շարք խնդիրների լուծմամբ, որոնցից առավել կարևորներն են հարկային բեռի կրճատումը և դրա հավասարաչափ բաշխումը, տնտեսական գործունեության և տնտեսական նախաձեռնությունների խթանումը, հարկային դրույքաչափերի վերանայումը, այդ ուղղությամբ հարկային օրենսդրության հստակեցումը և պարզեցումը, համակարգում վարչարարության կատարելագործումը, օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ արդյունավետ հսկողության գործուն մեխանիզմների ներդրումը, հարկերի հավաքագրելիության մակարդակի բարձրացումը:
2. Հարկային ոլորտում պետական կարգավորման բարեփոխումները պետք է կրեն համալիր բնույթ և, առաջին հերթին, ուղղված լինեն հարկային ճնշման թուլացմանը, տնտեսական ակտիվության բարձրացմանը, հարկման բազայի ընդլայնմանը, ինչպես նաև հարկային վարչարարության կատարելագործմանը, հարկատուների գործունեության թափանցիկության ապահովմանը և հարկումից խուսափելու հնարավորությունների բացառմանը:
3. Հայաստանի Հանրապետությանը բնորոշ առանձնահատկությունները պահանջում են, որ հարկային քաղաքականության կատարելագործմանն ուղղված բարեփոխումները պետք է կրեն ինչպես օրենսդրական, այնպես էլ տնտեսական և կազմակերպչական բնույթ:
4. Իրավական առումով, հարկային ոլորտում պետական քաղաքականությունը պետք է միտված լինի տվյալ բանագավառի հարաբերությունների օրենսդրական կարգավորման հստակեցմանը, այդ դաշտում անհրաժեշտ կայունության ապահովմանը, հսկողության արդյունավետ մեխանիզմների ներդրմանը, հարկման կայուն ռեժիմների հաստատմանը, հարկային իրավախախտումների համար պատասխանատվության համարժեք միջոցների սահմանմանը, հարկային արտոնությունների տրամադրման համակողմանի հիմնավորվածության ապահովմանը, եկամտահարի չհարվող շեմի վերանայմանը և այլն:
5. Տնտեսության զարգացմանը միտված հարկային քաղաքականության հիմնական ուղղություններ պետք է դառնան հարկերի խթանիչ գործառույթի ուժեղացումը, փոքր և միջին ձեռներեցության խթանումը,

ներդրումային միջավայրի բարելավումը,ինովացիոն քաղաքականության իրականացումը,նորամուծական գործունեության խրախուսումը, տնտեսական նախաձեռնությունների խթանումը, տնտեսության վրա հարկային բեռի թեթևացումը,հարկման բազայի ընդլայնումը,և հարկերի հավաքագրելիության մակարդակի բարձրացումը և այլն:

6. Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացումը պահանջում է հարկային մեխանիզմների շարունակական կատարելագործում, հատկապես՝ եկամտային հարկի դրույքաչափերի և հարկման սանդղակի վերանայման, չհարկվող շեմի սահմանման, շահութահարկի տարբերակված դրույքաչափերի կիրառման, ամորտիզացիոն քաղաքականության կատարելագործման, տնտեսության իրական հատվածի ձեռնարկությունների տնտեսական արդյունավետության բարձրացման,արտադրության ոլորտում ներդրումների խթանման ուղղություններով:
7. Հարկային վարչարարության ոլորտում պետական կարգավորման բարեփոխումները պետք է ընթանան հարկային հաշվետվությունների քանակի և պարբերականության կրճատման,հաշվետվությունների մեջ արտացոլվող տեղեկատվության հստակեցման,ՓՄՁ-երի համար հարկային հաշվետվողականության առավել պարզեցված կարգի սահմանման,հարկային ծառայության աշխատակիցների վարձատրության չափի վերանայման, նյութական խրախուսման արդյունավետ համակարգի ներդրման, հարկատուների եկամուտների և ծախսերի վերահսկման արդյունավետ մեխանիզմների ստեղծման,հարկային ծառայողների որակավորման ու արհեստավարժության նկատմամբ պահանջների, ինչպես նաև դրանց կատարման համար պատասխանատվության միջոցների խստացման,հարկային համակարգի կառուցվածքի կատարելագործման,հարկ վճարողներին հարկային խորհրդատվության տրամադրման մեխանիզմի բարելավման ուղղություններով:
8. Հարկային վարչարարության կատարելագործումը պետք է սկսվի հարկային ստուգումներին վերաբերվող ընթացակարգերի հստակեցմամբ, այդ գործընթացի թափանցիկության և հրապարակայնության ապահովմամբ:Դրան հասնելու համար անհրաժեշտ է իրականացնել բացառապես հիմնավորված հարկային արտագնա ստուգումներ:Վերջիններիս պատշաճ իրականացումը

պահանջում է պետական աջակցություն և հարկային մարմինների լիազորությունների ընդլայնում: Պետական աջակցությունը տվյալ դեպքում պետք է կայանա հարկային ծառայության և պետական կառավարման այլ մարմինների տվյալների բազաների միավորման, ինչպես նաև տեղեկատվական արդիական տեխնոլոգիաների ներդրման մեջ: Արդյունքում էականորեն կմեծանան հարկային ծառայությունների հնարավորությունները՝ մինչև ստուգումների իրականացումն ունենալ անհրաժեշտ գնահատական հարկատուների տնտեսական վիճակի մասին, իրականացնել հարկատուների ծախսերի և եկամուտների օպերատիվ վերահսկում, բացառել օրենքների տարրնթերցումները, կիրառել պատասխանատվության համարժեք միջոցներ և, որ ամենակարևորն է, բացահայտել հարկերից խուսափող կազմակերպություններին:

9. Հարկային վարչարարության, այդպիսով նաև հարկային համակարգի արդյունավետության բարձրացման համար չափազանց կարևոր է հասարակական իրազեկման պրակտիկայի ներդրումը: Այն թույլ կտա ոլորտում ապահովել անհրաժեշտ հրապարակայնություն և թափանցիկություն, էականորեն բարձրացնել հասարակության ակտիվությունն ու նրա վերահսկողական դերի նշանակությունը: Ընդ որում, հարկային մարմնի կողմից անպարտաճանաչ հարկատուների և նրանց հովանավորող պաշտոնյաների անունների, ինչպես նաև վերջիններիս կողմից գործարարությամբ զբաղվելու և այդ առումով պատժամիջոցներ կիրառելու մասին պարբերաբար հրապարակումները մեծապես կնպաստեն երկրում հարկային քաղաքականության ընդհանուր արդյունավետության բարձրացմանը:

Ատենախոսության հիմնական արդյունքներն հրապարակվել են հեղինակի հետևյալ աշխատություններում.

1. Անաստասյան Ս. «Հարկային քաղաքականությունը ՀՀ-ում և դրա արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները», «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» Հանրապետական գիտաժողովի նյութեր: Գիրք 1, Երևան 2013թ., էջ25-29:

2. Անաստասյան Ս. «Հարկային քաղաքականության ոլորտում ՀՀ և միջազգային փորձի համեմատական վերլուծությունը», «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» Հանրապետական գիտաժողովի նյութեր: Գիրք 1, Երևան 2013թ., էջ29-34:

3. Անաստասյան Ս. «Հարկային քաղաքականության պետական կարգավորման հիմնախնդիրները և դրանց լուծման մոտեցումները», «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» Հանրապետական գիտաժողովի նյութեր: Գիրք 1, Երևան 2014թ., էջ 50-54:

4. Անաստասյան Ս. «Հարկային քաղաքականության պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում՝ տնտեսության զարգացման համատեքստում» «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» Հանրապետական գիտաժողովի նյութեր: Գիրք 1, Երևան 2014թ., էջ 55-60:

АНАСТАСЯН СУКИАС АНАСТАСОВИЧ
ПРОБЛЕМЫ ГОСУДАРСТВЕННОГО РЕГУЛИРОВАНИЯ
НАЛОГОВОЙ ПОЛИТИКИ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 - «Экономика, управление хозяйством и его областями».

Защита состоится 7-го ноября 2014 года, в 13.30 часов на заседании Специализированного совета 015 ВАК РА по экономике, действующего в Ереванском государственном университете, по адресу: г.Ереван, 0009, улица Х.Абовяна 52.

РЕЗЮМЕ

Объект и предмет исследования. Объектом исследования является налоговая система Республики Армения, а предметом исследования - налоговая политика и механизмы ее реализации.

Цель и задачи исследования. Целью исследования является разработка механизмов по улучшению налоговой политики, для достижения которой в работе поставлены следующие задачи:

- исследовать место и роль налоговой политики в системе государственного регулирования экономики и выявить особенности ее реализации;
- проанализировать зарубежный опыт разработки налоговой политики и провести сравнительный анализ государственного регулирования в этом направлении в различных странах;
- изучить структуру налоговой системы и дать оценку ее влияния на налоговую политику;
- исследовать законодательно-правовые основы налоговой политики и особенности их формирования в РА, с выявлением присущих им недостатков;
- исследовать особенности и основные формы проявления налоговой политики в РА;
- исследовать налоговую нагрузку, дать оценку ее уровня в РА и разработать предложения по ее справедливому распределению;

- выявить проблемы разработки и реализации налоговой политики в Республике Армения и обосновать предложения по их решению.

Научная новизна диссертации. Научные результаты диссертации, обусловленные решением поставленных в исследовании задач, заключаются в следующем:

- на основе анализа особенностей государственного регулирования налоговой политики в РА и применяемых в этом направлении механизмов оценены пределы влияния налоговых ставок на экономическое развитие и повышение деловой активности;
- разработаны предложения по повышению стимулирующей роли налогов и по совершенствованию государственного регулирования этой сферы на основе оценки влияния налоговой политики на развитие реального сектора экономики;
- с целью стимулирования инвестиций и осуществления эффективной инновационной политики предложено полностью или частично освободить от налога на прибыль компании, занятых реализацией технологических программ, в части финансовых отчислений, совершаемых в этом направлении;
- на основе исследования действующих принципов налогового администрирования в республике разработаны мероприятия по повышению эффективности налогового администрирования, направленные на внедрение механизмов справедливого налогообложения и повышение уровня собираемости налогов.

SUQIAS ANASTAS ANASTASYAN
ISSUES OF THE STATE REGULATION OF TAX POLICY IN THE REPUBLIC OF
ARMENIA

The abstract of the dissertation for the pursuing of the PhD in the field “Economics and Management of Economy and its Spheres” 08.00.02

The defense of the dissertation will take place on November 7, 2014 at 13.30 at the Meeting of the Specialized Council 015 in Economics of SCC of RA acting at the Yerevan State University. Address: Republic of Armenia, Yerevan, 0009, 52 Kh.Abovyan str.

ABSTRACT

The object and the subject of the study: the research object is the tax system of the Republic of Armenia, and the subject of this study is the tax policy and its implementation mechanisms.

Research goal and objectives: The goal of this research is to design mechanisms aimed at improving the tax policy, and in order to achieve it the following objectives were set in the dissertation thesis:

- To study and analyze the role and the importance of the tax policy in the system of the state regulation of the economy and to identify the peculiarities of applying/implementing this policy;
- To study the best practices in the area of tax policy state regulation, by making a comparative analysis of approaches to the state regulation and in that area;
- To study the structure of the tax system and evaluate its impact on tax policy;
- To study the legal base/principles regulating the tax policy and the peculiarities of designing and improving the tax policy in the Republic of Armenia, by identifying its drawbacks/shortcomings;
- To study the peculiarities and the main implications of tax policy in the Republic of Armenia,

- To study the tax burden, assess the level of the burden in the Republic of Armenia and design and propose recommendations for the equitable distribution;
- To identify the main issues of development and implementation of tax policy in the Republic of Armenia and develop recommendations for solving them;

The scientific novelty of the dissertation thesis: The main research results of the dissertation thesis that are related with meeting the objectives set are the followings:

- Based on the analysis of peculiarities of the state regulation of the tax policy in the Republic of Armenia and mechanisms utilized, the possible impact of changes in tax rates on the economic development and boosting the business activity was assessed;
- Based on the assessment of the impact of the tax policy on the real sector of the economy specific recommendations were designed to increase the role of taxes in promoting the economic development and to improve the state regulation of this sector;
- In order to promote investments and successfully implement the innovation policy it was proposed to provide tax incentives in the form of partial or full profit tax exempts to those companies that implement technology projects in case of investments or financial resources channeled into these projects;
- Based on the study of the existing principles of tax administration in the Republic, specific measures to increase the efficiency of the tax administration were designed to enable the introduction of mechanisms to ensure fair taxes; and to increase the level of taxes collected.